

Պատկերներ բոլոր լեզուներով տպագրված

Կ. ՖԵՐԴԻՆԱՆԴՈՎ

ՀԱՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ Յ Ե Վ ՆՐԱ ՈԳՈՒՏՆԵՐԸ

Թագ. գործադրեց Ս. Ռ.



636.5
\$-47

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԺՈՂԱՍԻՄՈՒՄ

ԴՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ - 1926

ԳՅՈՒՂԱՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ-Ի

ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

1. ~~Հ. Մ. Մ.~~ Մեր անկիւնները (սակավաթիվ որին.) 20 կ.
2. Հ. Փիլոսոֆիան յեւ Մ. Միլիոնյան. — Ինչու ձեռնառու յի
գործարանում յեւ ի շփոյն. պանիր պատրաստելը . 3 »
3. Հ. Փիլոսոֆիան. — Ստորագրութիւնը և նրանց մշակութայն
յեւ պատկերները . 10 »
4. ~~Հ. Մ. Մ.~~ Հ. Մ. Մ. Հ. Հոգային Որեւորիւրդը
յեւ պատրաստելու հարց ու պատասխաններով. մասն. առա-
ջին. աշխատանքային հարցադրութիւն (ստորագր.) 40 »
5. Պ. Հեկիմյան. — Թիւնու մշակութայն . 10 »
6. Պ. Հեկիմյան. — Շնորհիւ ժողովրդի, նրա կերակրելն ու
խնամելը . 10 »
7. Կ. Միլի-Շահնազարյան. — Միտախոտի մշակութայնը. 20 »
8. Ս. Միլի-Շահնազարյան. — Տարբերակ մանկապարտէզին. 20 »
9. Կ. Միլի-Շահնազարյան. — Անհատական թե՛ կողմերով կաթ-
նամանակութիւն . 10 »
10. Հ. Հարությունյան. — Բարձր, կնքի պայմանագիր (չա-
փած) . 5 »
11. Ս. Միլի-Շահնազարյան. — Շարժանքը և նրա նշանակութ. 15 »
12. Կ. Միլի-Շահնազարյան. — Ինչպիսի մշակել խաղողի աչի-
ները (28 նկարով) . 35 »
13. «Մեկնանքս զեղի գյուղ» — Անդրկովկասյան Յերկրա-
յին համալսելի բանաձեւը գյուղացիական հարցի մասին
Ս. Շահնազարյանի նախադրումով . 15 »
14. Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրո-
նական Կոմիտէի Զարգաց Պլանումի Բանաձեւերը . 15 »
15. Կ. Միլի-Շահնազարյան. — Ստոր. յեւ յայտարար. անասունների
մանկապարտէզ . 15 »
16. Հ. Միլի-Շահնազարյան. — Գյուղական տնտեսական բանաձեւերով յայնը և
միջոցաւ յայն կոմունիստական շարժումը . 50 »
17. Կ. Միլի-Շահնազարյան. — Ուղեցույց արդյունաբեր. խոզաբու-
նութիւն . 15 »
18. Պ. Միլի-Շահնազարյան. — Հայտարարութիւններ և նրա պատ-
կեր . 20 »

636.5
Ֆ-47

24 SEP 2010

Պոլեմարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

№ 19 (22) «ԳՅՈՒՂԱՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ» № 19 (22)

Վ. ՖԵՐԴԻՆԱՆԴՈՎ

630
165-ԺԵ

ՀԱՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
Յ Ե Վ
ՆՐԱ ՈԳՈՒՏՆԵՐԸ

1003
1601

Ռուս. փոխադրեց Ս. Բ.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈԴԺՈԴԿՈՄԵՏԻ

ՂԱՐԱԳԻՆԻՍՏ.—1926

Խմբագրությամբ
ՀԱՂԺՈՂԿՈՄԱՑԻ ԽՄԲ. ԿՈՂԼԵԳԻԱՅԻ

Տպագրական Տրեստի Ղարաբլիտայի տպարան № 153
Գրառեպվար № Տիրաժ 3000

ԹՈՉՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ ԳՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՐՈՂ Ե ԼԱՎ ՅԵԿԱՄՈՒՏ ՍՏԱՆԱԼ

Մեր գյուղերում ընտանի թռչունները՝ հավը, սազը, բազը մեծ մասամբ պահում են սեփական կարիքների համար: Շատ քիչ ե պատահում, վոր գյուղում հավեր պահեն՝ միայն քաղաքում ծախելու համար:

Գյուղում տան աշխատանքը կլինե ե կատարում: Յեվ մինչև այժմ ել ընտանի թռչունների խնամքն ու պահպանումը կնոջ գործ ե համարվում: Թուխս զնելը, հավերին կուտ տալը և մնացած աշխատանքները կլինե ե կատարում:

Ռուսաստանում ել այսպես եր, այնտեղ ել թռչնապահությունը սեփական կարիքների համար եր և մեծ մասամբ կնոջ գործ: Բայց կամաց-կամաց գյուղացին սովորեց թռչնապահությամբ պարապել և հիմա շատ շրջաններում ընտանի թռչուններից, որինակ՝ հավից ու բազից, գյուղացին բավական ոգուտ ե ստանում:

Սրանից մի յերեսուն տարի առաջ Ռուսաստանի գյուղացին արտասահման եր ուղարկում 18 միլիոն ուղբլու արժողությամբ թռչնապահության մթերքներ: Տասը տարի հետո 18 միլիոնը դարձավ 39 միլիոն, իսկ սրանից տասը տարի առաջ արդեն ծախվում եր 75 միլիոն ուղբլու չափ: Այդ գումարից միայն Վարոնեժի նահանգն ստանում եր 10 միլիոնից ավելի:

Այսպիսով քսան տարվա ընթացքում թռչնապահությունից ստացած յեկամուար չորս անգամ ավելացել ե: Ահա թե ինչ ոգուտ ե տալիս ընտանի թռչունը:

Թռչնապահությունը անողուտ չի և կարող է լավ յեկամուտ տալ, յեթե պետք յեղած խնամքը տարվի: Թռչնապահության շուկան միշտ էլ ապահոված է, միշտ էլ կարելի յե ձու, հավ ծախել: Իսկ այդ նշանակում է, վոր Թռչնապահությունը ինչքան զարգացնենք, այնքան էլ մեծ յեկամուտ կըստանանք:

Թռչնապահությունը միլիոնների յեկամուտ է տալիս, բայց գյուղացու վաճառած հափն ու ձուն, վորպես մթերք, շատ պակասություն ունեն: Լավ ապրանքին լավ գին են տալիս, իսկ գյուղացու ծախած ձվերի մեջ պատահում են փչացած ձվեր, կեղտոտ, մանր, հավերը փոքր են լինում, լղար, միսը պինդ: Ուրեմն՝ յեթե այդ մթերքները լավացնենք, ստացած յեկամուտն էլ ավելի կըշատանա:

Խողապահությունն էլ այդպես եր. պահում եյին (հիմա յեւ են շատերը պահում) տեղական լղար և մանր խոզեր, վորոնք քիչ ճարպ ու միս ունեն, ծախելիս էլ լավ գին չեն տալիս: Գյուղացիք շատ շուտ հասկացան, վոր ավելի լավ է ցեղական սպիտակ խոզեր պահել: Այդ խոզերը շատ միս ու ճարպ են տալիս, շուկայում ավելի թանգ են առնում, դրա համար էլ հիմա սկսել են տեղական խոզերի փոխարեն ցեղական սպիտակ խոզեր պահել:

Միայն խոզերը չեն: Վեր գյուղացին այժմ չգիտե, թե ինչքան ոգտակար է յերկու կովի փոխարեն մի կով պահել, բայց շատ կաթնատու և յուղղաշատ: Կամ թե հավ չի աշխատում իր մատակ ձին լավ վորձաձիով քաշել: Յեղական ապրանքի ոգուտը բոլորն էլ գիտեն:

Բայց գյուղացին մինչև այժմ շատ քիչ է աշխատել ընտանի թռչունները լավացնելու, ազնվացնելու համար: Մինչև հիմա յեւ տեղական հավեր են պահում, կարծելով, վոր տեղական մանր հավերն ավելի ոգտակար են, քան ցեղական հավերը:

Ուրիշ յերկրներում այդպես չէ: Ինչպես վոր մենք

աշխատում ենք մեր կովերն ու ձիերը ազնվացնել, լավ անասուն ունենալու համար, այնպես էլ այնտեղ թռչուններն են ազնվացնում: Այնտեղ սմեն մի գյուղացի ունի ազնվացեղ հավ, սագ, բադ: Շատերն ուրիշ տեղերից են բերել տալիս այդ տեսակները, վորովհետև ոգտակար են համարում, փորձով համոզվել են ցեղական թռչունի ոգուտին: Մեզանում միայն մի քանի գյուղացիներ են ազնվացեղ թռչուններ պահում. նրանք արդեն տեսել են ոգուտը:

Մեր տեղական հափն ածում է տարեկան 50-ից մինչև 70 ձու, այն էլ մեծ մասամբ փոքր ձվեր, այն ինչ ցեղական հավեր կան, վորոնք մինչև 200 ձու յեն ածում, այն էլ մեծ ձվեր: Մեր տեղական հավը 2—3 ֆնտից ավելի չի, իսկ շատ ցեղական հավեր 8—12 ֆունտ են կշռում: Յեւ այսպիսի ծանր ու մեծ հավեր շատ հեշտությամբ մեր գյուղացին կարող է իր տնտեսության մեջը պահել: Այդպիսի տասը հավ պահես, տարեկան մինչև հազար հինգ հարյուր ձու կունենաս: Այ քեզ մի լավ հորթի գին:

Գյուղացու տնտեսության մեջ թռչուններ պահելու համար շատ հարմարություններ կան: Հավերը սիրում են փափուկ հողում, աղբանոցներում քուջուջ անել, բզեզներ ու վորդեր հավաքել, իսկ գյուղում փափուկ հող էլ կա, աղբ էլ:

Մեր գյուղացին ցորեն ու գարի յե ցանում. հնձելիս, կասելիս, ցորենը տուն տանելիս միշտ էլ հատիկներ են թափվում. շատ անգամ ցորենը փչանում է հորի մեջ, կամ մկներն են կրծում պարկերի ցորենը: Այդ բոլորը կրփչանար, կրկորչեր անողուտ, յեթե հավերը չլինեյին: Նրանք մեկ-մեկ հավաքում են, ցեխի, կեղտի մեջ ընկած հատիկները ուտում են և այն, ինչ վոր պետք է փչանար, հավերի սնունդ է դառնում, հավը ձու յե տալիս, կամ

չաղանում ե, մտակալում: Յերկու դեպքում ել տերն ե ոգ-
տվում: Հատիկներին բացի կարտոֆիլի կճեպներ կան,
բանջարանոցի ավելցուկ և այլն, վորոնք հավի համար
շատ լավ կեր են:

Յեղական հավ պահելը շատ ավելի հեշտ ե, քան մի
ուրիշ ցեղական անասուն: Մի լավ ցեղական աքլոր գնե-
լուց հետո հաջորդ տարին կարելի յե ունենալ կես-ցեղա-
կան հավեր, վորոնք մաքուր ցեղականից պակաս ձու չեն
ածում, համել ավելի դիմացկուն են:

Բայց ցեղական մի աքլորով թռչնապահության յեկա-
մուտը շատ չի ավելանա: Կարող ե պատահել, վոր աք-
լորը համապատասխան ցեղի չլինի, ուրեմն ոգուան ել
սպասածի չափ չի լինի: Յեղական թռչունն ել, յեթե լավ
չխնամես, չկերակրես ուզում ե հավ լինի կամ աքլոր, յեթե
լավ չպահես, վոչ մի ոգուտ չես ստանա, դեռ կարող են
սատկել: Այդ իսկի դարձանալի յել չի, ամեն մարդ ել աշ-
խատում ե ցեղական ձիուց ստացած քուռակն ավելի լավ
պահել, լավ կերակրել, թե չե՝ սպասած ոգուտը չի ստա-
նա: Բավական չե շատ ձվեր ստանալ, մեծ ու մաքուր,
կամ ծանր հավեր պահել, պետք ե իմանալ նաե ստացած
մթերքն սպառելու միջոցը, ավելի մեծ յեկամուտ ստա-
նալու համար:

Այս գրքույքի մեջ ել դրա մասին ե ասված: Կարգա-
ուշադրությամբ և կիմանաս, թե ինչպես կարելի յե
ձեռք բերել անտեսությանդ համար ցեղական թռչուններ՝
շատ ձու ածող, ծանր ու մեծ, ինչպես պետք ե խնամել
նրանց, կերակրել ու պահել՝ ավելի շատ ոգուտ ստա-
նալու համար, ինչպես պիտի ծախել հավն ու ձուն:

ՅԵՂԸ ՎՈՐ ԼԱՎ ԼԻՆԻ, ՅԵԿԱՄՈՒՏՆ ԵԼ ՇԱՏ ԿԸԼԻՆԻ

Սովորաբար մեր գյուղերում թռչնապահությամբ ա-
ռանձին մարդ չի պարապում, շատերն ել չգիտեն, թե
Նավ ոգուտ ստանալու համար ինչպես պետք ե պահել
ընտանի թռչուններին: Տանտիկինը առավոտները մի բուռ
կուտ ե տալիս, նայում թե ինչքան ձու յեն ածել և մեկ
ել դարնան սկզբին թուխս դնելու մասին մտածում:

Դրանից բացի ել ուրիշ խնամք չի տանում: Ել դարմա-
նալու չի, վոր թռչնապահությունը ոգուտ չի տալիս մե-
ղանում, մենք ինչ ծախս ենք անում, վոր ինչ յեկամուտ
ստանանք: Մեր կովերն ել կաթ չեն տալ, յեթե նրանց
չկերակրենք, ջրելու չտանենք և գոմը չմաքրենք:

Իսկ յեթե ցեղական հավեր պահենք, ընտիր և լավ,
կերակրենք այնպես, ինչպես հարկավոր ե, նրանց համար
լավ հավաքուն շինենք (և վոչ թե մեր հավաքների պես
կեղտոտ, մութ ու խոնավ տեղերում պահենք), յեթե այդ
ծախսն անենք, հավը մեկին տաան ոգուտ կըտա: Միայն
հարկավոր ե իմանալ, թե ինչ ե պետք, առաջ վորից
սկսել:

Մեր ընտանի տեղական թռչունները, մեր սովորական
հավն ու սագն ապրում են համարյա թե ճնձղուկների և
կաշաղակների պես: Նրանք միշտ ազատ են, բաց ոգում,
իրենք են իրենց գլխի ճարը տեսնում. ել ինչպես կարող
են համ չաղանալ, համ ել շատ ձու ածել: Բոլոր վայրի
թռչուններն ու կենդանիները մարդու համար ոգտակար
մթերքներ քիչ են տալիս: Դրա համար ել մարդը շատ
հնուց սովորել ե ընտելացնել նրանց, բազմացնել, վոր
լավ խնամքով և ոգտակար տեսակները ջոկելով տարեց տա-
րի ավելի շատ ոգուտ կարողանա ստանալ:

Յեւ վրատ տարիներ են անցել, մինչև մարդուն հաշտվել ե վայրի կենդանու կամ բույսի մի տեսակին ազնվացնել: Դե համեմատեցեք անտառի խնձորն ու մեր այգիների խնձորը, վայրի խոզն ու սպիտակ խոզը, տեսեք ինչքան տարբերութիւն կա և ինչքան շատ աշխատանք ե թափել մարդը, մինչև այդ գրութիւն հասցնելը:

Թառնապահութիւն մեջ ել մարդիկ ժամանակի ընթացքում կարողացել են ընտիր ցեղական թռչուններ ըստ տանալ, վորոնք մեր սովորական ընտանի թռչուններից տարբերվում են, ինչպես վայրի խոզն սպիտակ խոզից: Յեղական թռչունները տեղականից շատ ավելի արդյունք են տալիս (ձու, միս), դրա համար ել նրանք կոչվում են արդյունավետ տեսակներ:

Մեր տեղական հավերի մեջ ել շատ ե պատահում ծանր ու մեծ կամ շատ ձու ածող հավ, բայց այդպիսի հավի ձվերը չեն պահում շատացնելու համար, այլ կամ ծախում են, կամ ուտում: Թխականի տակ զանազան հավերի ձվեր են դնում, հարեանից փոխ առած ձվեր: Այս դեպքում իհարկե կըստացվեն բազմատեսակ ձուտեր, վորոնց մեջ լավն ել կըլինի, վասն ել: Այդ ձևով շատ դժվար կըլինի տեղական հավերն ազնվացնել:

Ուրեմն թռնապահութիւնից ոգուտ ստանալու համար ամենից առաջ պետք ե լավ հավեր պահել: Կարելի յե և տեղական հավերից ջոկել. դրա համար յերկու ճանապարհ կա:

Առաջին. ամենից առաջ պետք ե վորոշել, թե այդ գլուղում ինչն ե ամենից ավելի ձեռնտու՝ ձին ե թանգ ծախվում, միսը, թե յերկուսն ել միասին: Այդ վորոշելուց հետո տեղական հավերից պետք ե ջոկել ամենից լավերը, այսինքն՝ շատ ձու ածող կամ մալի հավեր: Յեթե ուղում ես միայն ձու ծախել ուրեմն շատ ձու ածող հավեր ես ջոկում և թողնում, վորպես ցեղացու: Ընդհանրապէս նկատված ե, վոր շատ ձու ածող հավի կատարը մի կող

մի վրա յե կախված, ականջակոթերն սպիտակ են, պոչը ցցած, հավը ուրախ և աշխույժ ե լինում: Աքլոր ջոկելու համար պետք ե մայրը շատ ձու ածող լինի, աքլորն ել պետք ե ժիր լինի, կանչող, բոլորովին առողջ, մոտ յերկու տարեկան: Աքլորի կատարը պիտի ուղիղ լինի, վեր ցցված:

Մնացած անպետք հավերը պետք ե ծախել: Զոկած հավերից լավերին թուխս պետք ե դնել, այնուհետեւ, ձուտերը մեծանալուց հետո, նորից ջոկել, ելի մնացածը ծախել: Մի քանի տարի պետք ե շարունակ հետեւել, լավերը ջոկել, վատերը ծախել: Այսպիսով մեր ջոկած հավերից մենք ավելի շատ ոգուտ կըստանանք, քան թե առաջ եյինք ստանում, ի հարկե միշտ ել ցեղացվի համար պետք ե թողնել առողջներին, իսկ հիւանդ, թույլ հավերը պետք ե ծախել:

Ամեն մի տարի, կամ յերկու տարին մի անգամ պետք ե ուրիշ տեղից աքլոր ձեռք բերել, վորպեսզի արյունակցութիւն չունենան հավերի հետ: Առանց արյունը թարմացնելու բան չի դուրս գալ, թռչունները գնալով կը մանրանան, կըլղարեն և միայն վնաս կըտան:

Յեթե մտացու հալ ե հարկավոր, պետք ե տեղականների միջից ջոկել ամենից ծանր, մեծ և շուտ չաղացող հավեր: Նկատված ե, վոր կարմիր վոտքերով հավը փափուկ և լավ միս ունի. հանդարտ և զանգաղաշարժ հավերը շուտ են չաղանում: Մտացու հավերն ել ընտրում են այնպես, ինչպես ձու ածողները, այսինքն տարեց տարի ջոկում են լավերը, մնացածը ծախում:

Սա առաջին ճանապարհն ե, յերբ մենք աստիճանաբար ենք ազնվացնում մեր հավերը, և այն ել տեղական տեսակը, — եժան և ուղիղ ճանապարհ ե. այդպիսով մենք կը ստանանք և՛ զիմացկուն, տեղական պայմաններին սովոր և՛ ոգտավետ ցեղ: Այս ճանապարհով մենք մեր նպատակին մի քիչ ավելի դանդաղ ենք հասնում:

Երկրորդ՝ ճանապարհն ավելի շուտ ե հասցնում մեր նպատակին: Մի տարում մենք կարող ենք ունենալ ցեղա-

կան ընտիր հավեր: Բայց դրա համար հարկավոր եղեղա-
կան աքլոր գնել, իսկ ավելի շուտ հասնելու համար նաև
2—3 ցեղական հավ:

Այդ նույնն է, ինչ վոր մեր տեղական հասարակ կովը
ազնվացեղ ցուլով բեղմնավորելիս: Բեղմնավորման ժամա-
ակ ազնվացեղ վորձի հատկություններն անցնում են
եզին և ծնված հորթն իր մարից ավելի լավ է լինում:

Բայց այդ յերկրորդ ճանապարհը շատ խնամք և ուշա-
դիր վերաբերմունք է պահանջում: Առանց դրան բան չի
դուրս գա: Բացի այդ, համարյա թե բոլոր տեսակի ցեղա-
կան հավերն ստացված են ուրիշ յերկրներում, վորոնց
կլիման մեր յերկրի կլիմայի նման չի, ուրիշ յերկրներից
բերած ցեղական հավերը հաճախ են հիվանդանում, սա-
կում, կամ թե այն յեկամուտը չեն տալիս, ինչ վոր տա-
լիս են ուրիշ յերկրներում:

Այդ է պատճառը, վոր մենք առաջին ճանապարհն ենք
խորհուրդ տալիս: Յեթե մենք ել աշխատենք, մեր տեղա-
կան տեսակներից կարող ենք մի քանի տարի հետո ստա-
նալ այնպիսի ցեղական հավեր, վորոնք հետ չեն մնա մյուս
յերկրների ցեղական հավերից:

Յեթե մի անտեսություն ձեռք է բերել ցեղական
հավեր և աքլոր, շուկայում ձու կամ միս ծախելուց բացի,
նա կարող է հենց ցեղական հավեր ծախել: Այդ ել պա-
կառ ոգուտ չի տալ նրան: Ցեղական աքլոր գնելուց ա-
ռաջ հասարակ աքլորները պետք է ծախել, թե չե նրանք
կրփետրեն նորեկին, ազնվացեղին, վոր լավ կովան չի:

Ինչպես ել լավացնելու լինենք մեր տեղական հավերը,
սագերը, այնուամենայնիվ մի բան պետք է չմոռանալ. ցեղից
շատ բան է կախված՝ լավ հավ կրպահես, շատ ել ոգուտ կըս-
տանաս:

Ցեղական հավերը պետք է ամենալավերից շոկել: Քա-
նի աշխատենք, այնքան ավելի կըլավացնենք, հավերն

ավելի շատ ձու կածեն, ավելի ծանր կըլինեն, իսկ տերն ել
շատ ոգուտ կըստանա:

Այս ամենը, ինչ վոր ասվեց հավերի մասին վերաբե-
րում է և ընտանի մնացած թռչուններին՝ սագերին, բադե-
րին, հնդու հավերին և այլն:

ԻՆՋՊԻՍԻ ՀԱՎԵՐ ԿԱՆ ՅԵՎ ՎՈՐՈՒՆՔ ԵՆ ԼԱՎ ՄԵՋ ՀԱՄԱՐ

Այնպիսի շրջաններ կան, վորտեղ շատ հսուց ել տեղական հավերը տարբերվել են ուրիշ շրջանների հավերից շատ ձու ածելով, շուտ չաղանալով: Այդ տեղերի հավերը կեր շատ են ունեցել, կամ լավ են պահվել. դրա համար ել նրանք ավելի ծանր են, ձվերն ել մեծ: Բացի այդ, այնպիսի տեղեր ել կան, վոր հավերը մի տեսակ են, իրարից չեն զանազանվում գույնով, արտաքին տեսքով, նրանք կամ բոլորն սպիտակ են, կամ մոխրագույն են և կամ սև:

Այդ բոլոր ցեղերն ել մարդու խնամքի և աշխատանքի շնորհիվ են աճեցնել, ոգտակար դարձել:


Սպիտակ հավերը մեծ են, գեղեցիկ. նրանց փետուրներն սպիտակ են, առանց խալերի: Վոտներն ու կտուցը դեղին են, աչքերը նարնջագույն, կատարը՝ վարդագույն, տափակ: Սպիտակ հավերը 4 մատ ունեն: Աքլորի միջին քաշը $6\frac{1}{2}$ ֆունտ ե, հավինը՝ $5\frac{1}{2}$. այդ հավերը տարեկան հարյուրից ավել ձու յեն ածում—մեծ, սպիտակ կեղևով ձվեր: Վառեկները դեկտեմբերից սկսում են ձու ածել. շատ արագ մեծանում են: Գարնան ձուտերը նույն տարվա աշունքին արդեն հասունանում են:

Սեվ-չալպուտրիկ հավերի փետուրները սև են, սպիտակ պոտերով: Փետուրը պինդ ե, փայլուն: Վոտներն ու կտուցը դեղին են, աչքերը՝ նարնջագույն: Կատարը տափակ ե, ունեն 4 մատ: Աքլորի միջին քաշը 6 ֆունտ ե, հավինը՝ $4\frac{1}{2}$ ֆունտ: Տարեկան հարյուր ձվից ավել են ածում, ձվերը մեծ են, սպիտակ: Հոկտեմբեր ամսից արդեն ձու յեն ածում:

Դեղին-պոչը սեվ հավերի փետուրները դեղին են, միայն պոչի փետուրները և թևերը սև են, վոտքերն ու կտուցը դեղին, աչքերը՝ նարնջագույն, 4 մատ ունեն, տափակ, բիշ կարմրավուն կատար: Աքլորի միջին քաշը մոտ 7 ֆունտ ե, հավինը՝ $4\frac{1}{2}$, ձվերը մեծ են, դեղնավուն: Հունվարից սկսում են ձու ածել:

Վերև հիշված տեսակներն ամենից շատ են տարածված Ռուսաստանում և շատ ել ոգուտ են տալիս: Բացի այդ, կան և այլ ցեղեր, վորոնք բերված են ոտար յերկրներից, և ժամանակի բնթացքում վարժվել են տեղական կլիմային: Այդ ցեղերը հետևյալներն են.—

Պլիմուտ-րոկ (տես նկ. 1). մեծ և տեսքով հավ ե, լայն կրծքով և մեջքով: Փետուրը մոխրագույն ե, ավելի ճիշտ՝ պողպատի գույնի, սև, կանոնավոր զծերով, վոտները յերկար են, դեղին, առանց փետուրի: Չորս ատամ



Նկ. 1.

Պլիմուտ-րոկ

ունի, մուգ-դեղին կտուց: Աչքերը բաց գույնի յեն, կատարը ուղիղ և կարճ, ախանջակոթերը կարմիր են, պոչը

փոքր: Համբ աճեն ինչով նման է աքլորին, միայն փետուրն է մի քիչ ավելի թուխ: Ձուռ ածող է, տարեկան տալիս է հարյուրից ավելի մեծ, թուխ կճեպով ձվեր: Ծուռները դիմացկուն են, պինդ: Դանդաղ են աճում: Աքլորի միջին քաշը 10 ֆունտ է: Պլիմուտ-րոկը դիմացկուն է, քշով բավականացող: Տեղական հավերից ստացված ճուռները շատ նման են լինում իրենց ցեղական հորը՝ պլիմուտ-րոկի աքլորին:

Փավերոլ (տես նկ. 2): Փրանսիայում, Փավերոլ կոչված վայրում, տեղացիները շատ վաղուց պարապում են թռչնապահության: Ժամանակի ընթացքում նրանք կարողացան ստանալ այնպիսի ցեղի հավեր, վորոնք և շատ միս են տալիս, համով ել լավ են և՛ շուտ մեծանում և՛ շատ ել ձուռ յեն ածում:



Նկ. 2.

Փավերոլ

Փավերոլը վարդագույն վոտներ ունի, սպիտակ կտուց, հասարակ, փոքր կատար, խիտ մերուք և ծանր, լայն մարմին (այդ ամենից կարևորն է), լայն ու խոր կուրծք և լայն մեջք: Ծուռները շատ դիմացկուն են, շատ շուտ մեծանում են (4-5 ամսական ճուռը կշռում է 5-6 ֆունտ): Հավերը տարեկան ածում են մինչև 120 թխագույն ձվեր:

Փավերոլը շատ կուտ չի պահանջում, շատ հեշտ հար-

մարվում ամեն անտեսության: Ուրիշ ցեղերից 5—6 ֆնտանոց հավ ստանալու համար, պետք է ամենաքիչը մի տարի կերակրել, իսկ Փավերոլ հավերը նույն քաշն ունենում են 5—6 ամիս կուտ ուտելուց հետո: Ուրեմն կես տարվա կուտ է մնում մեզ: Փավերոլների միսը շատ քրնքույշ է, համով. դրա համար ել քաղաքներում միշտ ել թանգ գնով են առնում այդպիսի հավերը:

Որպինգտոնը (տես նկ. 3) մեծ է, ծանր, քնքույշ, սպիտակ մսով:

Կան դեղին, սև, սպիտակ և այլ գույնի որպինգտոններ: Սեվ որպինգտոնի փետուրները մետաղի փայլ ունեն: Կատարը փոքր է, հասարակ. վոտներն ու կտուցը դեղին են, դեմքը, ականջակոթերը՝ կարմիր: Դեղին որպինգտոնի վոտները վարդագույն են:



Նկ. 3.

Որպինգտոն

Որպինգտոնը կարճիկ է, մեծ, քառակուսի մարմնով, փոքրիկ գլխով: Հարյուր ձվից ավել յե ածում, ձվերը մեծ են: Թուխս նստել չի սիրում. ձմեռն

եւ ե ձու ածում: Ճուտերը դիմացկուն են, շատ շուտ փետրավորվում են. արագ չեն աճում: Որպիւնգաոնի միջին քաշը 10—12 ֆունտ է: Գյուղական տնտեսություններին համար ավելի լավ է դեղին որպիւնգաոնը:

Վիանդոտը (տես նկ. 4) շատ մեծ չի, աքլորը՝ 7—8 ֆունտ է, հավը՝ 4—6 ֆունտ: Փետուրներն սպիտակ են, արծաթագույն կամ եւ վոսկեգույն: Աքլորները հաճախ սպիտակ են, իսկ հավերը՝ արծաթագույն կամ վոսկեգույն:



Նկ. 4.

Վիանգոս (սպիտակը)

Այգալիսի հավերի փոքրիկ և կրծքի փետուրները մուգ գծեր ունեն, կտուցն ու վոտները դեղին են, յերեսը կարմիր: Մարմինը լայն է, պինդ, պոչը փոքր է: Լավ խնամելու դեպքում մինչև 200 ձու յե ածում, բայց ձվերը փոքր են: Վիանդոտը լավ թխական է:

Իտալական հավեր (տես նկ. 5) կարճլիկ են, գեղեցիկ ու ժիր: Փետուրները տարբեր գույնի յեն. սև, սպիտակ-դեղին և այլն: Կատարը հասարակ է, շատ մեծ և մի կողմի վրա յե թեքված: Հավերի վոտներն ու կտուցը գե-

ղին են, յերեսը կարմիր, ախանջակոթերը սպիտակ: Տարեկան ածում են մինչև 180 շատ մեծ (իտալական հավերի ձվերն ամենից մեծն են) և սպիտակ ձվեր: Թուխս չեն նստում: Ճուտերը դիմացկուն, շուտ մեծանում են, փետրավորվում: Մեծերը շատ ժիր են, թռչում են կտուրների, ցանկապատի վրայից: Շատ մեծ յեռանդով իրենց համար կեր են փնտռում:



Նկ. 5.

Իտալական հավեր

Վերը հիշված բոլոր տեսակներն եւ մեղանում հաշոգությամբ կըտարածվեն: Դժբախտաբար մեր գյուղացին մինչև այժմ գեռ ծանոթ չի արդ տեսակներին և շարունակում է տեղական հավով յոլա գնալ: Մի քանի տեղեր եւ տարածվում են այնպիսի տեսակներ, վորոնք պակաս ձեռնատու յեն, որինակ՝ լանգշանը և կոխինիսինը:

Լանգշանը խիտ, սև փետուրներ ունի, կարմիր յերես: Ճիշտ է, քաշը ծանր է, բայց այնքան դանդաղ են մեծանում ($1\frac{1}{2}$ ից մինչև 2 տարի), վոր ձեռնատու չի լինում պահել: Բացի այդ, լանգշանի ձուտերը դիմացկուն չեն, ուշ են փետրավորվում, դրա համար եւ շատերը հիվանդանում կոտորվում են: Մեծերն եւ ցրաից են նեղվում, վոտներն են հիվանդանում:

Ամենից առաջ գյուղացիք լսել են կոխինխինի մասին. նա գեղեցիկ փետուրներ ունի, դրա համար ել սիրողներն առաջներում սիրում եյին նրանց պահել: Կան գեղին, սև գույնի կոխինխին: Արտաքինից կոխինխինը շատ մեծ է յերևում, վորովհետև փետուր շատ ունի, վոտներն ել փետրավոր են, ասես՝ վարդիկ հագած լինի: Գյուղատնտեսության համար արժեք չունի. շատ ուշ է մեծանում, ձու քիչ է ածում, միսը պակաս է և այն ել պինդ, վատ: Ճուտերը դիմացկուն չեն, հիվանդանում են: Մեծերն ել փետրավոր վոտների շնորհիվ, հաճախ մրսում են: Յեթե ուզում եք ոգուտ տեսնել, վոչ լանգշան պահեք, վոչ ել կոխինխին:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՎԵՐԸ ՊԱՆԵԼ

Թող վոչ վոք չմտածի, թե լավ հավ ունենալուց հետո ոգուտն ինքն իրեն կրլինի:

Ամենալավ դեպքում գույղացին կարող է գնել մի լավ աքլոր, կամ շատ-շատ մի աքլոր և յերկու հավ: Դրա համար ել պետք է իմանալ թե ինչպես վարվել նրանց հետ, վորպեսզի վնաս չստացվի:

Յեթե գնած ցեղական աքլորին բախում ազատ թողնես, յերկու որվա ընթացքում տեղական աքլորները նրան կըկտցահարեն, կըհալածեն և յեթե չսպանեն ել, արնակոլով կանեն, կըքչեն մի անկյուն: Ցեղական աքլորն ուրեմն հովերի հետ չի լինի, նշանակում է սպասած ոգուտն ել չի տա:

Ցեղական աքլորին բախում բաց թողնելուց առաջ տեղական աքլորները կամ պետք է ծախել կամ մորթել: Հավերն ել շատ լավ չեն վերաբերվի նորեկին. պետք է հավերին կամանց-կամանց սովորեցնել, վարժեցնել նոր աքլորին: Իսկ դրա համար ամենից լավն է ցեղական աքլորին բաց թողնել հավերի մեջ այն ժամանակ, յերբ նրանք տեղավորվում են թառերի վրա: Մի գիշերում նրանք կըվարժվեն յեկվորին և ել չեն գզի, չեն քշի իրենցից: Աքլորն ել, հավերի հետ մի գիշեր մնալով, կըվարժվի հավաբնին ու բախին:

Մի աքլորին 15 հավից ավել չպետք է ընկնի, իսկ ավելի լավ է 10—12 հավ: Յեթե տնտեսության մեջ շատ հավ կա և մի աքլորը հերիք չի անում, այն դեպքում պետք է կամ հավերի մի մասը ծախել, մինչև մյուս տարին ջահել աքլորներ կրլինեն և նոր հավեր կըղնվեն, կամ թե մի աքլորի համար ջոկել 10—12 հավ և մնացածին առանձացնել, ջոկ տեղ պահել: Յեթե մի աքլորին 15 հավից ավելի մնա, ածած ձվերի մեջ կըլինեն և առանց սաղ մի (ճարպոտ)

ձվեր, վորոնցից ճուտ չի դուրս գա: Այդ պետք է լավ իմանալ. շատ անգամ թուխսի տակ այդպիսի ձվեր են դնում և յեթե ճուտ չի դուրս գալիս, կարծում են, թե աքլորն է վատ: Մինչ դեռ պատճառն այն է, վոր մի աքլոր 12—15 հավից ավելի չի կարող բեղմնավորել:

Հաջորդ տարին ցեղական աքլորից առաջ յեկած ճուտերից ամենալավերը պետք է ջոկել և պահել ցեղացվի համար: Մնացածը պետք է ծախել: Այս նոր աքլորներն այժմ կարելի յե խառնել հավերին, դարձյալ առաջվա հաշվով:

Ցեղացվի համար ընդհանրապես լավ է 2—3 տարեկան հավերը թողնել, վորովհետև վառեկները լավ չեն ձուածում, ինչպես մեծերը, և թույլ ճուտեր են տալիս: Շատ կարևոր է, վոր աքլորներն արյունակցություն չունենան հավերի հետ: Դրա համար կամ պետք է ամեն տարի դրսից աքլոր առնել, կամ թե (այս ավելի աժան է) աքլորը փոխել հարեանի աքլորի հետ: Փոխելիս յերկուսի տերերն էլ կոգտվեն:

Յանկալի յե, վոր ամբողջ գյուղով կամ համայնքով ըսկսեն թռչնապահությամբ պարապել: Ցեթե համայնքով ել չի հաջողվում, գոնե մի քանի տներ իրար հետ միանան: Բոլորն ել ցեղական աքլորներ կունենան, տեղականը կծախեն, կոգնեն իրար: Պետությունն ել ոգնություն ցույց կըտա, յեթե ամբողջ համայնքով վորոշում հանեն որինակելի թռչնապահությամբ պարապելու համար: Հավը մաքրասեր է, կեղտ չի սիրում, ինչպես և ծանր ոդ, խոնավություն: Հավը շատ է մրսում, մանավանդ ձմեռը:

Ամեն տեսակ շինություն ել հարմար է հավաքնի համար: Տնտեսության մեջ յեկած ամենաեթան և հասարակ շինությունն ել լավ հավաքուն կըլինի, յեթե հարմարեցնենք հավերի համար: Լավ հավաքնի մեջ հավերը հեշտությամբ են ձմեռում և ամբողջ տարին ձու յեն ածում:

Հավաքնում քամի չպետք է լինի, պատերը պետք է կավով ծեփել, իսկ յեթե պատերը բարակ են, ձմեռը պետք է ծեփել թարմ փեյնով կամ ծղոտով ծածկել: Հավաքունը պետք է պատահան ունենա: Առաստաղը կարելի յե շինել յեղեգնից, իսկ կտուրը ծածկել ծղոտով: Հատակին պետք է հարդ (դարման) փռել, կամ ծառի չոր տերեւներ. դրա համար ել աշունքը պետք է մի տեղ կիտել չոր տերեւ կամ հարդ: Շաբաթը մի անգամ հարկավոր է հավաքնի հատակի հարդը փոխել, նորը փռել:

Թառերը պետք է բարձր չլինեն, բոլորն ել պետք է լինեն միահավասար, թե չե հավերն աշխատում են ամենից վերև բարձրանալ, տեղի համար կռվում են, ընկնում են, այն ինչ ներքի թառերը դատարկ են մնում: Ծանր և մեծ հավերը շատ դժվարությամբ են թռչում բարձր թառերը:

Հավերի համար շատ ոգտակար է թարմ աղբը: Նրանք այնտեղ կեր են գտնում և ձմրան ցրտերին տաքացնում են իրենց վոտները:


Հավաքնում պետք է լինի այն բոլորը, ինչ վոր անհրժեշտ և ոգտակար է հավերի համար: Այդ իրերը թանգ չեն և ամեն մի գյուղացի կարող է իր տանը պատրաստել: Հավաքնում բացի թառերից մի քանի բներ ել պետք է լինեն, վորպեսզի հավերը նստեն և ձու ածեն:

Բները կարելի յե շարել կամ տախտակների վրա, գետնից կես արշին բարձրությամբ, կամ ել պատից կախել: Ամենից լավն է մի շարջի վրա մի քանի բուն դնել, բայց իրարից բաժանել, վորպեսզի ձու ածելիս հավերն իրար չտեսնեն, թե չե ձու ածելիս նրանք անհանգիստ են լիում, խանգարում են իրար, կռվում են և շատ անգամ ածած ձուն կռվելիս ընկնում է, ջարդվում: Ի հարկե մեծ վնաս չի, յեթե մի ձու յե ջարդվում, բայց հավը ջարդված ձու ուտելով սովորում է ձվի: Իսկ այդ վնաս է տիրոջ համար:

Շատ ոգտակար է տարին մի անգամ հավաքունը կրաշրով սպիտակացնել, վորպեսզի վոջնչանան տիգերը և վոջիլները, վորոնք շատ են անհանգստացնում թռչուններին:

Հավաքնում պետք է լինի կուտի և ջրի աման:

Կուտի համար հարկավոր է առանձին աման, վորպեսզի կուտը շաղ չտան (հավերը սիրում են կուտը շաղ տալ), վորպեսզի կուտը իզուր տեղը չփչանա: Տախտակի յերկու կտորից կարելի յե կուտի հասարակ և շատ լավ աման շինել (տես նկ. 6), ինչպես յերևում է նկարից:



Նկ. 6.

Կերի աման

Ջրամանը կուտի ամանից ել կարևոր է:

Ջրի միջոցով վարակիչ շատ հիվանդություններ են տարածվում:

Մեզանում հաճախ ջուրը տալիս են տաշտակի մեջ կամ կոտրած ամանում: Ջուրը մնում է որերով, նեխվում:

Բացի դրանից, այդպիսի ջրից խմում են նաև ագռավը, ծիտը, կաչաղակը: Նրանց կոտուցի ու վոտների վրա կան վարակիչ հիվանդության մանրէներ (բացիլներ), վորոնք վոտներին կպել են հարևանի բակում սատկած հավի միսն ուտելուց: Այսպիսով վայրի թռչունները պատճառ են դառնում այդ հիվանդությունների տարածման:

Յեթե մի հավ է սատկում, մեծ փնա չենք համարում: Բայց այդ հիվանդ հավը կարող է ջուր խմելու գրնալ, վոտները կոխել ջրամանի մեջ, վոտները կարող են ծերտոտ լինել, իսկ ծերտի մեջ ել կան հիվանդության մանրէներ: Այս դեպքում կրնանակի խմելու ջուրը վարակված է, և հիվանդությունը կարող է տարածվել նաև մյուսների մեջ: Շատ անգամ հենց կեղտոտ ջուրն է հիվանդացնում հավերին: Ուրեմն հավերին միշտ պետք է տալ մաքուր ջուր և ամեն որ ջուրն անպատճառ փոխել:

Ջրամանից և կուտի ամանից բացի, պետք է մի ցածր արկղ ել լինի, մեջը մոխիր, վորպեսզի հավերը մոխրում թաթախվեն, մոխրոտվեն: Դրանով նրանք ազատվում են վոջիլներից: Յեթե մոխիր չկա, վոջիլը կարող է շատանալ, հավերը կըղարեն, և կըդատարեն ձու ածել:

Մի ուրիշ արկղ կամ քթոց ել պետք է ունենալ մեծահատ ավազով: Հավերը ագահությամբ են ավազը կուլ տալիս: Ավազը նպաստում է հավերի մարսողության. յեթե ավազ չլինի, նրանց մարսողությունը խանգարվում է:

Շատ հարկավոր է և մի ուրիշ աման, մեջը կրածեփ, ձվի կճեպներ, կավիճ, հանգած կիր: Ձվի կճեպի համար շատ կիր է հարկավոր, այդ պատճառով ել հավերը կրի պետք ունեն: Յեթե կիրը պակաս է, ձվերն առանց կրճեպի յեն լինում, մի բարակ թաղանթով, կամ թե շատ բարակ կեղևով. և ձուն շատ շուտ է փչանում:

Ահա թե ինչքան քիչ բան է հարկավոր հավանոցի համար: Նրանց մեջ մի թանգանոց բան չկա, բոլորն ել կոպեկներ արժեն և ամեն մարդ ել կարող է իր տանը սրատրաստել, իսկ ոգուտը շատ մեծ է:

ՀԱՎԵՐՆ ԻՆՁՈՎ ԵՆ ԱՊՐՈՒՄ

Ասացինք, վոր մեր գյուղացու բախն ու բոստանը հավերի համար շատ լավ են: Հավը սիրում է շարժվել, ազատ ման գալ, մի տեղ աղբակույտն է՝ մեջը լիքը բըզեզներ և ձիճուներ, հավը վազում է քուջուջ անելու, հետո կանաչ խոտերի կողմն է վազում, բախում թափած թրիքի մեջ գարի յե ման գալիս, ավազ է կուլ տալիս— մի խոսքով՝ ամբողջ ուրը վազվզում է դեռ ու դեն, ուրախ, ժիր և առողջ: Տերը շատ-շատ որեկան մի կամ յերկու անգամ կուտ պետք է տա հավաբնի առաջ, վոր բներում ձու ածեն, ուրիշ տեղ չածեն: Ի հարկե, միայն ամառն է այդպես:

Քաղաքում այդպես չէ, ազատ ման գալու տեղ չկա, հավը փակված է, նեղվում է: Բակերում վոչ խոտ կա, վոչ հատիկ և վոչ էլ բզեզ: Դրա համար էլ քաղաքում հավերին կերակրելիս կուտի հետ ամեն ինչ պետք է տալ՝ և՛ կեր, և՛ ավազ, և՛ հատիկ:

Ձմեռ ժամանակ, յերբ դաշտերը ձյունով են ծածկված, էլ կանաչ չկա, բզեզները հողի տակ են պահվել,— կերի հոգսը մի քիչ ծանրանում է: Պետք է կերակրել, վոր շուտ սկսեն ձու ածել: Մի կերպով, կես կուշտ, կես սոված ձմեռն անցկացնելուց հետո, հավը թուլանում է, լրդարում և դարձան սկզբին կեր ճարելով մինչև կըշտանա՝ ձու ածելն էլ կուշտնա:

Դյուղերում միշտ էլ այդպես է: Հավերը ձու յեն ածում ամրան սկզբին, յերբ ձուն շուկայում լավ գին չունի: Իսկ յեթե ձմեռ ժամանակ հավերը լավ կերակրվեն, այն ժամանակ նրանք շուտ կըսկսեն ձու ածել և ավելի շատ կածեն:

Առաջն ասում է, թե կովի կաթը նրա ատամի տակն է: Այսինքն, յեթե լավ պահես՝ շատ էլ կաթ կըստանաս: Նույն բանը կարելի յե ասել և հավերի մասին, լավ կերակրելուց հետո կըստանաս և՛ շատ ձու և՛ չաղ միս:

Իսկ յեթե հավը սոված մնա, այն դեպքում թեկուզ ամենաշատ ձու ածողն էլ լինի, էլի քիչ ձու կածի:

Մենք ձու յենք ուտում և գիտենք, թե ինչքան սննդաբար է նա: Հավերը վորտեղից կարող են այդքան սննդաբար նյութեր պատրաստել, յեթե լավ չկերակրվեն:

Յեթե մի հավը տարեկան հարյուր ձու ածի, հարյուր ձուն քսան ֆունտ է, այսինքն մի քանի սնդամ ավելի ծանր ամենալավ ցեղական հավից:

Ուրեմն ձուն պատրաստվում է այն սննդից, վոր հաջն է ստանում: Հավը մի մեքենա յե, վոր անպետք և եժան կերը՝ կուտը, բզեզն ու վորդը դարձնում է գին ունեցող ձու: Պարզ է, յեթե այդ մեքենան կեր չստանա, նյութ չի ունենա ձու պատրաստելու, կարճ ասած՝ էլ ձու չի ածի:

Հաջն ամեն ինչ ուտում է: Դրա համար էլ հեշտ է կերի հետ տալ այն բոլոր նյութերը, վորոնք հարկավոր են թե հավի առողջության, թե մեծանալու և թե՛ շատ ձու ածելու համար:

Թուշունի կանոնավոր սնունդի և շատ ձու ածելու համար անհրաժեշտ են սպիտակուցը, ճարպը, ածխաջրերն ու կիրը:

Առողջ լինելու համար ամեն ոք հավը պետք է ուտի մոտ 20 մսխալ կիր, վորից 3—4 մսխալ սպիտակուց: Իսկ յեթե ուզում ենք, վոր հավը չաղանա կամ շատ ձու ածի, սպիտակուց հարկավոր է մոտ 6 մսխալ: Բացի այդ, հարկավոր են և ուրիշ նյութեր: Չստակելու համար հավին պետք է օրեկան 3—4 մսխալ սպիտակուց, 14

մսխալ ածխաջրեր, $1\frac{1}{2}$ մսխալ ճարպ, իսկ չաղանալու կամ շատ ձու ածելու համար հավին պետք է որեկան 6 մրսխալ սպիտակուց, 16 մսխալ ածխաջրեր և $1\frac{1}{2}$ մսխալ ճարպ:

ՀԱՎԵՐԻՆ ԻՆՉՈՎ ԿԵՐԱԿՐԵԼ

Այժմ տեսնենք, թե ինչով կերակրենք հավերին, վորպեսզի վերևում հիշված բոլոր նյութերն ել մեջը լինեն:

Ամենատարածված և սովորական կերը—հատիկն է ցորենի, դարու հատիկը: Հավերն ախորժակով են ուտում ցորենի, դարու, կորեկի, վոսպի հատիկներ և շատ խոտերի սերմեր:

Բոլոր սերմերի մեջ ել ածխաջրեր շատ կան, բացի այդ, կա նաև քիչ սպիտակուց և շատ քիչ ճարպ: Ավելի շատ սպիտակուց ունեն սիսեռի, վոսպի, կտավատի հատիկները, դրա համար ել նրանք ամենից սննդաբարն են: Բայց նրանց սպիտակուցն ել քիչ է: Յեթե հաջն իրեն անհրաժեշտ սպիտակուցն ստանա հատիկներից որինավ՝ դարուց, նա որեկան յերեք բառորդ ֆունտ գարի պետք է ուտի: Այդքանը տեղ ել չեր անի նրա ստամոքսում:

Ահա թե ինչու հավերն ազահուլթյամբ են հարձակվում ճիճուների, բզեզների վրա, կտցահարում են վոսկորները և այլն: Այդ բզեզները, ճիճուները, մսի կտորները մեծ քանակությամբ սպիտակուց ունեն:

Բացի այդ, հավերն ախորժակով են ուտում կանաչ խոտ, կաղամբ, սեխի, ձմերուկի կլեպներ և այլն: Կանաչը ախորժակ է բաց անում և նպաստում է ձու ածելուն:

Յեթե հավերն ամբողջ տարին փակված են, ման չեն գալիս իրենց ցանկացած սնունդը գտնելու, պետք է նրանց այնպիսի կեր տալ և այն չափով, վոր պետքական բոլոր նյութերն ել մեջը լինեն:

Շատ լավ են հատիկները (ինչպիսի հատիկ ել լինի տնտեսություն մեջ), կանաչը (ձմեռ ժամանակ կանաչի

փոխարեն կարելի յե տալ կաղամբի տերեւներ, խոտ, կարտոֆիլ և այլն): Սպիտակուցով շատ հարուստ են կտա-
վատի և ուրիշ բույսերի քուսպը: Յեթե աժան քուսպ ե
ճարվում, կարելի յե քիչ-քիչ տալ: Յորնի, դարու թեփն
ել անդարար ե և շատ սպիտակուց ունի: Փչացած
բորբոսնած, հատիկները չի կարելի հավերին տալ: Ծլած
հատիկը ոգտակար ե և հա՞մն ախորժակով ե ուտում:

Դյուղացին, մանավանդ ձմեռը, կարող ե գտնել դեն
դցած վոսկորներ, սատկած ձիու միս և այլն, վորոնք թա-
փառող շների կեր են դառնում: Սատկած ձիու միսը ձմեռ
ժամանակ շատ յերկար կարելի յե պահել, քիչ-քիչ յեփել
և տալ հավերին:

Հավերը հեշտությամբ չեն կարողանում կերը ճարել,
այնինչ կերը հարկավոր ե ձվերի կեղևի և իրենց հավե-
րի վոսկորների համար: Դրա համար ել վոչ միայն հա-
վաքնում պետք ե կրի կտորներ պահել, այլ և մի առան-
ձին տեղ, նեղ որվա համար: Ձվի կեղևը, կավիճը կրա-
ծեփի փշրանքները շատ են հարկավոր:

Կենդանիների վոսկորների մեջ վոչ միայն ճարալ և
սպիտակուց կա, այլ և շատ կիր: Դրա համար ել այդ
վոսկորները հավերի համար շատ լավ կեր են: Այն ինչ
վոսկորները դեն են շարտում, վորպես անպետք բան:
Հավերը մեծ ախորժակով են ուտում չորացրած և մանր
աղած վոսկորներ: Այդ աղած վոսկորներն հավերին կարելի
յե տալ ամբողջ տարին: Նա, ով այս խորհուրդին կըլսի և կը
կատարի, առողջ և ժիր հավեր կունենա և շատ ձու կըս-
տանա:

ԻՆՉՔԱՆ ԿԵՐ ՏԱԼ ՀԱՎԵՐԻՆ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ

Հավերին կուտ պետք ե տալ կամ առանձին ամաննե-
րի մեջ, ինչպես ասացինք, կամ ել կուտը պիտի շաղ
տալ հատակի վրա: Հավաքնում կուտը պետք ե շաղ տալ
միայն սաստիկ ցրտերի ժամանակ, յերբ հավերը փակված
են բնում: Այդ ժամանակ նրանք կուտը փնտրելով, քու-
ջուջ ել են անում, շարժվում են, մի քիչ տաքանում:

Հավերին կարելի յե և կարտոֆիլ տալ, բայց պետք ե
ե յեփել, մի քիչ ջարդել: Կարտոֆիլը շատ անդարար չի,
սպիտակուց քիչ ունի: Դրա համար ել կարտոֆիլով կե-
րակրելիս պետք ե մի քիչ թեփ, ալյուր կամ քուսպ
խառնել:

Յեթե մսեղեն ենք տալիս, դարձյալ պետք ե յեփել,
կոտորել մանր և այնպես տալ: Մսաջուրն ել կարելի յե
տալ, միայն պետք ե մեջը կարտոֆիլ խառնել,
կամ մի քիչ թեփ՝ փթրուկ անել և տալ: Մսաջուրը կա-
րելի յե ջրի տեղ ել տալ:

Այդ բոլոր փափուկ կերերն ամանի մեջ պիտի տալ,
թե չե կերի մեծ մասը վոտքի տակ կըկորչի:

Ձմեռը կանաչ չկա, վոր հավերն ուտեն, այնինչ
կանաչը շատ հարկավոր ե: Կանաչի փոխարեն կարելի յե
տալ բազուկ, կաղամբի տերեւ կամ դդում: Կանաչ կերը
բազուկը, կաղամբի տերեւը, դդումը պետք ե կախել հա-
վաքնի պատից, կես արշին հատակից բարձր, վորպ եսղի
հավը վիզն յերկարացնելով հասնի: Կարելի յե պատին
ցիցեր խփել և նրանց վրա անդացնել կանաչ կերը: Հա-
վաքնում ամբողջ որը հավերը կըկտցահարեն պատից կա-
խած դդումն ու բազուկը և կտաքանան:

Յեթե հավը քեֆ չունի, անշարժ ե, ախորժակը փակ-

վում եւ և քիչ ե ուտում՝ լղարում ե: Դե լղար հավի ու-
գուտն լինչ պիտի լինի: Բացի այդ, լղար հավերը ձան-
ձրանալուց սկսում են մեկ մեկու փետուրներ քանդել,
այնքան, վոր շատերը տկորանում են. կամ թե ձվերն
են լակում, սովորում են ձվերը գողանալ: Ի հարկե, հա-
վերի տերն ե փաստում:

Գարուն թե ձմեռ հավերը սիրում են աղբի մեջ քու-
շուշ անել: Ձիու աղբի մեջ գարու չմարսած հատիկներ
են լինում, ամառ ժամանակ՝ վորդեր, ձիու աղբի մեջ կա
և կիսամարս խոտ ու դարման: Իսկ հավերը շատ են սի-
րում այդպիսի խոտն ու դարմանը: Ձմեռը թարմ և տաք
աղբի մեջ քուշուշ անելով, հավերն իրենց վոտները տա-
քացնում են:

Հավերին պիտի հետեյալ կարգով կերակրել. առա-
վոտյան՝ քաղցած փորին պիտի կակուղ կեր տալ, կար-
տոֆիլ, կիսայեփ թեփ: Կակուղ կերի հետ տալիս են և
միս, քուսպ, աղած վոսկոր և այլն: Կեսորին և յերեկո-
յան պետք ե կուտ տալ:

Յեթե հավեր ամբողջ որը փակված են բնում, ամեն
մի հավին որեկան մոտավորապես պիտի տալ՝

Կենսապահ կեր		Ձու ածելու և չաղանալու համար	
Յորեն	15 մսխալ	Յորեն	12 մսխալ
Կարտոֆիլ	15 "	Կորեկ	12 "
Միս	2 "	Գարի	4 "
Քուսպ	2 "	Միս	4 "
Բազուկ	2 "	Սխառ	5 "
		Քուսպ	2 "
Ընդամենը 36 մսխալ		Ընդամենը 39 մսխալ	

Իհարկե, ամառը, յերբ հավերը լուսաբացից մինչև
իրիկուն դուրսն են լինում, պետք ե ավելի քիչ կեր տալ:
Վերը բերած ցուցակից ամառը կարելի յե հանել միսը,
քուսպը, սխառը, բազուկը և նույնիսկ կարտոֆիլը: Հա-
վերն իրենք են ճարում այդ բոլորը կամ նրանց փոխա-
րեն ուրիշ կեր են գտնում:

Մնում ե միայն, ցորենը, կորեկը, դարին: Նրանց
չափն ել կարելի յե պակասեցնել, մանավանդ հնձելու, կալ
սելու ժամանակ հավերն իրենք կըճարեն: Բայց մեշտ ել
պետք ե այնքան կեր տալ, վոր առանց մնացորդի հավերն
ուտեն:

Կերի ամաններ պետք ե ունենալ հարկավոր չափով,
վորպեսզի հավերը միաժամանակ ուտեն: Յեթե աման-
ները քիչ են, ամենից շուտ վրա յեն թափվում ուժեղ և
առողջ հավերը, թուլյերի բաժինը խլում են, այնինչ հենց
թուլյերին պետք ե շատ կեր տալ:

Հավերին միշտ որվա նույն ժամին պիտի կերակրել:
Հավերը վարժվում են և հենց վոր մոտենում ե կերի
ժամանակը, հավաքվում են մի տեղ և տված կերն ել
հավասար են ուտում:

Փորձված մարդը հավին նայելով կարող ե ասել՝ սո-
ված ե, թե վոչ: Յեթե հափն ագահությամբ ե հարձակ-
վում կերի վրա, կամ անհամբեր սպասում ե, ուրեմն սո-
ված ե: Իսկ յեթե կեր տվողին չի նայում, ուրեմն կուշտ
ե, պետք ե քիչ կերակրել:

ԻՆՁՈՒՅԵ ՇԵ ՇԱՎԸ ԱՎԱԶ, ՔԱՐԻ ՅԵՎ ՆՈՒՅՆ- ԻՍԿ ԱՊԱԿՈՒ ԿՏՈՐՆԵՐ ԿՈՒԼ ՏԱԼԻՍ

Այսպիսի փորձեր են արել. հավին պահել են վանդակում և ավագ չեն տվել: Համբ սկսել ե լղարել, չի կա-կարողացել կերածը լավ մարսել: Պատճառն այն ե, վոր հավի սննդառության գործարանները առանձին կազմություն ունեն:

Համբ առամ չունի, մյուս կենդանիների նման կերածը չի ծամում, այլ կուլ ե տալիս: Մնունդը բերանից մի առանձին խողովակով, վոր կոչվում ե կերակրափող, ընկնում ե փուչիկի մեջ:

Կերած կուտը մի առ ժամանակ մնում ե փուչիկի մեջ, կակղում-տոզում և կամաց-կամաց շարժվում ներքև:

Փուչիկից կերն ընկնում ե քարճիկի մեջ:

Քարճիկի պատերը շատ ամուր մկաններից են, իսկ ներսի թաղանթը չափազանց պինդ ե: Հենց քարճիկի մեջ ել սովորաբար հավաքվում են քարի կտորներն ու ավազը:

Յերբ կակղած և համարյա կիսամարս յեղած կերն ընկնում ե քարճիկի մեջ, քարճիկի մկանները մեծ ուժով սկսվում են սեղմվել, կծկվել և լայնանալ: Այդպիսով քարճիկի մեջ կերը արորվում ե, ջարդվում. քարճիկի մեջ հավաքված ավազի ու քարի կտորները այդ բանին շատ են ոգնում, ինչպես ջրադացաքար ցորեն աղալիս:

Քարճիկից հետո կերն ընկնում ե աղիքների մեջ և մարսվում: Ուրեմն քարերն ու ավազը շատ հարկավոր են հավերի մարսողության համար: Այդ քարերը նրանց տառաններն են: Դրա համար ել ձմեռը հավերին կուտի հետ միասին պիտի տալ և ավագ կամ քարի կտորներ, վորպեսզի հավերը կարողանան կերածը մարսել: Իսկ ամառը, քուշու շունիս, ուղածի չափ քար ու ավազ կարող են ճարել:

ԻՆՁՊԵՍ ԿԵՐԱԿՐԵԼ ՃՈՒՏԵՐԻՆ

Ձվից նոր դուրս յեկած ճուտերին մի ամբողջ որ չեն կերակրում: Նրանք դեռ ուտել չեն ուզում. նրանց ներսում դեռ դեղնուցից մի քիչ կա: Յեթե ձվից դուրս գալուց հետո կերակրենք, ճուտերի ստամոքսը կխանգարվի:

Յերկրորդ որը նրանց կարելի յե կերակրել պինդ յեփած ձվի փշրանքով, ձվի կեղևն ել հետը, կամ չոր հացի մանր կտորներով:

Յերրորդ որը կարելի յե փթրուկ տալ, գարու ալյուրից պինդ հունցած խմոր, թրջած հաց, կամ թե ձվի կրտորներով: Այդպես պետք ե կերակրել ինն որ, վորից հետո կարելի յե տալ և միս:

Ճուտերին ոգտակար ե և մի քիչ կանաչ տալ, մանր ջարդած կաղամբի տերևներ, կամ կանաչ սոխ, սխտոր և այլն: Ճուտերը շատ սիրում են մրջյունի ձվեր, ճանձեր, վորդեր ու բզեզներ: Խններորդ որից սկսած արդեն կարելի յե կորեկ տալ, ի հարկե քիչ:

Առաջին որերում կերը պիտի շուտ-շուտ տալ, յերկու ժամից մի անգամ, և կամաց-կամաց անցնել որեկան նախ 5, ապա 4, 3 անգամ կերակրելուն (յերկու ամսից շուտ չի կարելի որեկան 3 անգամ կերակրել):

Ճուտերի համար ել առանձին կերի աման կա, այդ ամանի մեջ են կեր տալիս, կերը վտտի տակ չի ընկնում:

Ճուտերին ել պետք ե ջուկ ամանից ջրել, վորպեսզի վտտները ջուրը չկեղտոտեն: Կեղտոտ ջուրը ճուտերի համար մահ ե:

Հենց վոր ճուտերը կշտացան, կերի ամանն ու ջրամանը պետք ե հեռացնել, վորպեսզի ճուտերը շատ չուտեն և չխմեն, թե չե կընկան դանդախ:

Ճուտերը մեծանալուց և փետրավորվելուց հետո նրանց համար նոր կերաման և ջրաման են պատրաստում, ինչպես մեծերի համար, միայն մի քիչ ավելի ցածրիկ և փոքր:

ԻՆՁՊԵՍ ԹՈՒԽՍ ԴՆԵԼ

Շատերը կարծում են, թե հենց վոր ձուռն արևի կամ լույսի դեմ բռնեցին, կարող են վորոշել սաղմ կամ, թե չե: Հավ դուրս կգա, թե աքլոր: Դատարկ հեքյաթներ են դրանք և մինչև այժմ ել շարունակվում են. սխալ գուշակելու դեպքում մոռանում են, իսկ հենց վոր պատահմամբ իրենց ասածն է դուրս գալիս, շարունակում են հավատալ նման հեքյաթներին: Իսկ ցեղական հավերի ձվերի մասին հազար տեսակ ավելորդ հավատալիքներ և պառվական զրույցներ կան: Որինակ՝ ասում են, թե լառի (վոտները փետրավոր) հավ ստանալու համար, տերն իր վոտները պետք է փալատով փաթաթի, կամ թե ուրբաթ որվա դրած թուխսը հավեր շատ կտա և քիչ աքլոր, կամ լավ ձուտեր ունենալու համար թուխսի տակ դրած ձվերը պլիտի կենտ լինեն և այլն:

Չի կարելի արևի դեմ պահելով իմանալ՝ ձվի մեջ սաղմ կա, թե վոչ: Բայց կարելի չե հավերն այնպես խնամել, վոր ածած ձվերը սաղմով լինեն, կարելի չե այնպես անել, վոր հավն առանց սաղմի (ճարպոտ) ձվեր չածի:


Լառի ձուտեր ունենալու համար լառի հավի ձու պետք է դնել թուխսի տակ: Թուխսի տակ դրած բոլոր ձվերից ձուտ ստանալու համար պետք է ձվերը ջուկել, լավ պահել, մինչև հավի թուխս նստելը: Հին ձվերի սաղմը փչածած է լինում, ուրեմն թուխսի տակ նոր ձվեր պետք է դնել, ամենաշատն յերեք շաբաթ առաջ ածած:

Դրա համար ել շատերն ամեն ուր հավերի ածած ձվերի վրա նշանակում են ամսաթիվը, վոր հետո իմանան, թե քանի որվա ձու չե, վորովհետև ցեղական հավեր ստանալու համար մենք պետք է իմանանք, թե վոր հավի

ձուռն ենք դնում թուխսի տակ. դրա համար ել ամսաթիվից բացի ձվի վրա նշանակում են, թե վոր հավն է ածել, տեղական, թե ցեղական, յեթե ցեղական է, վոչ ցեղից:

Յեթե գրելը դժվար է կամ ցեղական հավերի ձուռն հենց այնպես ել ջուկվում է մյուս ձվերից, ելի կարևոր է թուխս դնելուց առաջ իմանալ, ձուռն հիշն է, թե նոր: Դրա համար մի հասարակ միջոց կա:

Վերցնում են մի հաստ թուղթ, կարտոնի կտոր կամ բարակ տախտակ, ձեռքի 2 չափ: Կարտոն կամ տախտակի մեջ տեղում 3 կոպեկանոցի մեծությամբ մի ծակ են բաց անում: Յերեկոյան կամ ցերեկը (այն ժամանակ պետք է մուլթ սենյակ լինի, մառան կամ ամբար) վառում են ճրագը, վորի դիմաց պահում են տախտակը: Անցքի մեջ դնում են ձուռն. ճրագի լույսը տախտակի հետևի կողմից է: Ուշադրությամբ նայելով ձվի ներսում կարելի չե տեսնել կեղևի տակ փոքրիկ փուչ տեղ: Թարմ ձվի փուչ տեղ փոքր է, աննկատելի, 2—3 ուր անց այդ փուչ տեղը արծաթ շահանոցի չափ է, իսկ մի ամսից հետո փուչ տեղը ձվի մի հինգերորդ մասն է բռնում (տես, նկ. 7):



Թարմ

Նկ. 7.

Ձվեր

Հասցած

Այսպիսով ճրագի առաջ, կարտոնի կամ տախտակի մեջ բացած անցքում ձուռն դնելով և լույսի դեմ նայելով կարելի չե ջողկել ամենաթարմը և դնել թուխտի տակ:

Բացի թարմ լինելուց թխականի տակ դրվելիք ձվերը պետք հավասար մեծությամբ լինեն, վոչ մեծ (մեծ ձվերը շատ անգամ յերկու դեղնուց ունեն) և վոչ ել փոքր:

Ձվերը պետք ե հով և չոր տեղ պահել, չփչացնելու համար: Հարկավոր չի շուտ-շուտ տեղը փոխել, ձեռք տալ: Մի սենյակից մյուս տանել ել ե վնասում ձվերին:

Յեթե ձվերը կեղտոտ են, կարելի չե տաք ջրի մեջ թրչած շորով զգուշությամբ սրբել: Սրբելուց հետո չպետք ե չորացնել, հենց ափսոսել ել պետք ե տեղը դնել:

Ձվերը շատ են փչանում փոխադրելու ժամանակ: Այդ դեպքում դեղնուցը, վոր սովորաբար ձվի մեջ տեղն ելինում, ավելի ե մոտենում կեղևին: Այդպիսի ձվերից լավ ճուտ չի կարելի ստանալ: Դրա համար ել ցեղական հավի ձվերն ավելի լավ ե փոխադրել վոչ թե սայլով կամ ձիով, այլ ձեռքով:

Տուռն տանելուց հետո անմիջապես չի կարելի այդպիսի ձվերը թուխտի տակ դնել: Պետք ե մի ուր պահել և հետո դնել:

Ձվերի թարմ լինելուց բացի, ճուտերի վրա ազդում ե աքլորի և հավի տարիքը, առողջությունը, նաև ափսոս թե ինչպես են նրանց պահել:

Ձահել աքլորից և վառելից ստացած ձվերի սաղմը թույլ ե լինում, շատ անգամ այդպիսի սաղմը հենց թրխականի տակ ե փչանում: Հավն ու աքլորը 2—3 տարեկան պետք ե լինեն, լավ ճուտեր տալու համար: Պառավ հավերի ձուռն ուժեղ սաղմ ունի, յեթե միայն հավը շատ ճարպոտ չի: Ընդհանրապես պառավ հավերն ավելի շատ են ճարպակալում: Այդ դեպքում նրանց ձվերն առանց սաղմի յեն լի-

նում կամ թե չե՝ հավերն դադարում են ձուռն ածելուց: Հիվանդ կամ թույլ հավից ու աքլորից ստացած ձվի սաղմն ել թույլ ե լինում: Յեթե մի աքլորի շատ հավ ե ընկնում (15-ից ել շատ), աքլորի ույժը չի պատում բոլորին ել բեղմնավորելու, դրա համար ել յերբեմն ստացվում են առանց սաղմի ձվեր:

Յեթե հավերը փոքրիկ բակում են ման գալիս, նըրանք ձանձրանում են, քեֆ չեն ունենում, մաշվում են, աքլորն են թույլ ե բեղմնավորում և դարձյալ ստացվում են վատ ձվեր:

Թխականի բնի մեջ լավ ե դարման լցնել. բունը պետք ե այնպիսի տեղ պահել, վոր վոչ վոք թուխտին անհանդիստ չանի: Բունը չալիտի դնել վառարանի մոտ, ընդհանրապես այնպիսի տեղ, վորը ել շատ չոր ել տաք: Տաք և շատ չոր տեղում շատ անգամ ճուտը ձվի մեջ սատկում ե, վորովհետև տաքությունից ձվի կեղևի տակ յեղած թաղանթը չորանում ե և ել ոգ չի անցկացնում:

Թխականի տակ դնում են 12—13 ձուռ: Յեթե թխականը մեծ ե, ավելի շատ կարելի չե դնել: Ձահել հավի տակ պետք ե ավելի քիչ ձուռ դնել, վորովհետև շատ ձվերը նրանք չեն կարողանում ծածկել և տաքացնել:

Թուխտ պետք ե դնել, յերբ յեղանակը մի քիչ տաքացել ե: Թխականի բունը պետք ե շինել մարագում կամ ծածկի տակ, վորտեղ ուր մաքուր ե լինում: Մաքուր ողում սաղմն ավելի լավ ե աճում:

Թխականի մոտ պետք ե դնել մի արկղ, մեջն ավազ կամ մոխիր. մոխրի մեջ թաթախվելով թխականը ազատվում ե վոջիլններից, թե չե վոջիլներն այնքան կըշտանան և կանհանգստացնեն թխականին, վոր նա չի կարող ձվերի վրա հանդարտ նստել:

Որը մի անգամ թխականին պիտի հանել բնից և կեր տալ, կուտ կամ թե չոր հացի փշրանք: Շատ ոգտակար ե

կանաչ տալ՝ կաղամբի կամ բազուկի տերև: Յեթե կանաչ խոտ կա, կարելի յե և մի քիչ խոտ տալ:

Յերբ ճուտերն սկսում են ձվից դուրս գալ, չի կարելի թխականին բնից հանել:

Վոչ մի դեպքում թույլ չի տրվում ձեռքով ձվի կեղեվը պոկել, ճուտն ավելի շուտ դուրս բերելու համար:

Այդ ժամանակ շատ հեշտությամբ կարելի յե փնասել ճուտին, վորը կարող ե սատկել:

Նոր դուրս յեկած ճուտերին կարելի յե թուխսի տակ թողնել, յեթե թխականը պառալ ե և փորձված, թե չե ջահել թխականը շատ անգամ կոխ ե տալիս ճուտերին ըսպանում: Այդ դեպքում կարելի յե նրանց ջոկել, մի վանդակի մեջ դնել, վանդակը ծածկել բարակ շորով, պահել մի տաք տեղ և մի յերկու որից տալ թուխսին:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՌԱՆՑ ԹՈՒԽՍ ԴՆԵԼՈՒ ՃՈՒՏԵՐ ՍՏԱՆՈՒՄ

Շատ քիչ ե պատահում, վոր մի քանի հավ միանգամից կրթկրթան, ուղեհան թուխս նստել:

Յեթե ցանկանաս մի կամ յերկու հարյուր ճուտ ունենալ, ինչքան պետք չարչարվես 10—20 թխական ճարելու համար: Յեթե ճարես ել, հոգսն անպակաս ե լինելու. մեկը դժվար ե նստում, մյուսը ձվերն ե ջարդում, յերրորդի ճուտերն արդեն դուրս են յեկել, իսկ կողքինը դեռ նոր ե նստել և այլն:


Յեթե հավերի փոխարեն հնդուհավ նստեցնենք՝ մի քիչ կրհեշտանա: Միշտ ել հնդուհավին կարելի յե ստիպել, վոր թուխս նստի. հերիք ե մի յերկու որ նրան կողովի տակ նստեցնել ձվերի վրա:

Հնդուհավի տակ կարելի յե ավելի շատ ձու դնել՝ 20 կամ 25 հատ: Բայց դժվար ե հնդուհավ ճարել, թանգ ե, իսկ ամեն մարդ ել չի կարող հնդուհավ պահել: Ասենք՝ հրնդուհավն ել այնքան հոգս ու խնամք ե պահանջում, ինչքան մեր հավերը:

Մարդիկ շատ վաղուց են մտածել մի հնար գտնելու՝ առանց թխականի ուղածի չափ ձվերից ճուտեր հանելու:

Յեվ հիմա այնպիսի գործիքներ կան, վորոնք առանց թուխսի ձվերից ճուտեր են հանում, այն ել միանգամից հարյուր, յերեք հարյուր և նույնիսկ ավելի: Այդ գործիքը կոչվում ե ինկուբատոր (տես նկ. 8):

Ուշադրությամբ նայել են, թե ինչպես ե թուխսը ճուտեր հանում և այդ որինսովով ել ինկուբատորն են պատրաստել:



Նկ. 8.

Ինկուբատոր

Թուխան իր մարմնի տաքությամբ ե ձվերը տաքացնում: Ուրեմն գործիքն ել պետք ե տաքություն ունենա: Քննել են և տեսել, վոր այդ տաքությունը հավասար ե 30—32 աստիճանի: Յեթե տաքությունն ավելանա, սաղմերը տաքից կըվռնչանան, իսկ յեթե իջնի տաքությունը, սաղմերը չեն ել զարգանա: Իրա համար ել գործիքն այնպես են սարքել, վոր հնարավոր լինի միշտ տաքությունը պահել 30—32 աստիճանի վրա:

Ինկուբատորի շատ տեսակները կան: Կա ինկուբատոր, վորի կաղմությունը բարդ ե, շատ մասեր ունի, զինն ել թանգ ե: Բայց մեր նկարի վրա ցույց ե տրված ինկուբատորը հասարակ և աժան տեսակն ե:

Այդ ինկուբատորը փայտե մի մեծ արկղ ե, յերկուտակ պատերով: Պատերի մեջ թեփ ե ածված, տաշեղի կտորներ, վորպեսզի տաքությունն ավելի լավ մնա: Փայտե արկղի մեջ դրված ե ցինկե կամ յերկաթե թիթեղի աման: Ամանի չորս կողմը փակ ե, միայն չորս խողովակ կա, վորից յերկուսը կողքերի վրա յեն բացվում, մեկը վերե, մեկն ել ներքե:

Վերևի խողովակով ամանի մեջ յեռացած ջուր են ածում (հարյուր ձվի ինկուբատորը տանում ե 8—10 վեղրո ջուր): Կողքի մի խողովակով ամանի մեջ յեղած ոգն ե դուրս գալիս, իսկ մյուս խողովակին հազցրած ե մի ուրիշ ապակյա խողովակ, վոր յերևում ե դրսից: Յերբ ամանը լցնում ենք ջրով, ջուրը մտնում ե և ապակյա խողովակի մեջ: Այդպիսով մենք իմանում ենք, թե ինչքան ջուր կա ամանի մեջ: Ամանը մինչև բերանը լցնում ենք ջրով:

Ամանի տակ մի արկղ կա, վորի հատակը ծակեր ունի և հանովի յե: Այդ արկղի մեջ փափուկ ծղոտի վրա դարսում են ձվերը:

Ամանը, վորի մեջ տաք ջուր կա, վերից թուխսի պես տաքացնում ե ձվերով լի արկղը, վորի ներքևից և կողքերից փոքրիկ անցքեր կան՝ ոգը խաղալու համար: Ջրվերի մոտ տրված ե և ջերմաչափը, արկղի մեջ յեղած տաքությունը չափելու համար: Ահա հասարակ ինկուբատորը:

Յեթե ամանի մեջ յեղած տաք ջուրը մի քիչ սառչի (իսկ նա տաք մնում ե մոտ 12 ժամ), ներքևի խողովակից բաց են թողնում մի յերկու վեղրո սառած ջրից, իսկ վերևից ել նույնքան լցում յեռած ջուր: Ուրեմն ինկուբատորն ելի 12 ժամ կպահի հարկավոր քանակությամբ տաքություն: Այսպիսով, ամեն առավոտ և յերեկո հարկավոր ե ամանի մեջ ամեն անգամ յերկու վեղրո

յեռացրած ջուր ածել: 21 որից ճուտերն արդեն դուրս են գալիս ձվերից:

Ի հարկե պատմելը հեշտ է, քան գործելը: Պետք է սովորել, թե լավ ճուտեր ստանալու համար ինկուբատորին ինչպես պիտի նայել, ձվերը վոնց պիտի պահել: Թե չե առանց այդ փորձի, առանց ինկուբատորի լեզուն իմանալու, բոլոր ձվերն ել կըփչանան ճուտերը դուրս կըգան և կըսատկոտեն: Բայց այդ փորձն ել աշխատելով են ձեռք բերում:

Յեթե մեկն ու մեկը մտքում դնում է ինկուբատոր ձեռք բերել, կամ որինակելի թռչնապահությամբ պարապել, նա թող գյուղատնտեսից խորհուրդ հարցնի, իմանա, թե վնասողից կարելի չե ինկուբատոր ձեռք բերել, դինն ինչքան է, ինչպես պետք է խնամել ճուտերին և այլն:

Ճուտերի դուրս գալուց հետո, ելի տաքություն և հարկավոր: Չե՞ վոր թխականը միշտ նրանց իր թևերի տակ է պահում, տաքացնում: Դրա համար ել ինկուբատորում արհեստական ձևով ճուտեր ստանալուց բացի, հարկավոր է այդ տաքությունը: Մի ուրիշ ինկուբատոր են սարքել, ավելի փոքր և այնտեղ պահում են ճուտերին: Մի ամիս անց այդ ինկուբատորն ել նրանց հարկավոր չի և նրանք սկսում են մեծանալ առանց արհեստական թուխսի:

Շատերը կարծում են, թե ինկուբատորում ստացած ճուտերը լավ չեն, թույլ են լինում, լավ ցեղացու չեն կարող լինել և այլն: Այդ բոլորովին սխալ է: Ինկուբատորի ճուտերն ել մեծանում են այնպես, ինչպես թուխսի ճուտերը, նույնպիսի ձվեր ածում, առողջ են, չաղանում են, մի խոսքով՝ չի կարելի շուկել թուխսի տակ մեծացած ճուտերից:

Ինկուբատորով ճուտերը նույնքան ժամանակում են դուրս գալիս ձվերից, ինչքան և թուխսի տակ: Ինկուբատորը միայն թուխսի տաքությունն է փոխարինում, իսկ այն, ինչ վոր կատարվում է ձվի մեջ, նույնությամբ կրկնվում է թե՛ թուխսի տակ և թե՛ ինկուբատորում:

ԻՆՉ ԱՆԵԼ՝ ՎՈՐ ՀԱՎԵՐԸ ԶԼԻՎԱՆԴԱՆԱՆ

Հավերը մյուս կենդանիների նման հիվանդանում են: Վարակիչ հիվանդություններով, վոր մի տնից մյուսն են անցնում, հավերը հարցունքներով կոտորվում են: Դրա համար ել պետք է խմանալ թե՛ ինչ միջոցներ են հարկավոր հավերի հիվանդության դեմ կռվելու, ինչ անել, վոր հավերը չհիվանդանան: Ինչպես մյուս կենդանիների հիվանդանալու դեպքում գյուղացին զիմում է անասնաբուժին, նույնպես ել հավերը հիվանդանալիս նա պետք է իմաց տա նրան:

Ամենից շատ տարածված հիվանդությունը հավի հարբուխն է: Հավի քթածակներից սպիտակ ջուր է գալիս, հավը փռչում է, հագում: Քթածակներից յեկող ջուրը պղտորվում է, պնդանում: Հավի քեֆը կոտրվում է, չի ուտում, նիհարում է:

Այդ դեպքում մի ամանի մեջ պետք է տաք ջուր լցնել և մի գդալ սկիպիդար, տասը ըոպե հավին պահել ամանի մոտ, վորպեսզի գոլորշին շնչի: Մի յերկու անգամ այդպես պահելուց հետո հիվանդությունն անցնում է: Բայց հավին խիռլոյն չի կարելի բաց թողնել, թե չե կըմբսի: Պետք է սենյակում կամ մի տաք տեղ մի քիչ պահել:

Չմեռվա ցրտերին հավերը շատ անգամ սառցնում են վոտներն ու կատարը: Ցրտից կատարն ուռչում է, կարմրում, ծանրանում, յեթե շատ է սառած, կատարն ընկնում է: Կատարը կամ վոտները, յեթե սառել են՝ պետք է այծի ճարպ կամ նավթ քսել: Յեթե շուտ են խմանում կատարի կամ վոտների սառելը, կարելի չե և ձյունով արորել:

Յեթե հավն ախորժակով չի ուտում, փետուրները ցցվում են, ծերտը ջրալի չե, ուրեմն հավը փորանարինք

ունի: Պետք է դարու հատիկներն աղանձ անել և տալ հավին: Կարելի չէ և չորացրած հացի փշրանքներ տալ:

Յեթե հավը կապություն ունի, պետք է մի թեյի գգալ կտավատի ձեթ տալ:

Շատ անգամ հավերը, մանավանդ աքլորները կոպուս են իրար հետ, կտցահարում են իրար, արնոտում: Վերքը պետք է մաքուր ջրով լվալ, պղնձե արջասալի և շիբի փոշի շաղ տալ, մինչև վոր լավանա:

Պատահում է, վոր հավի վոտները սպիտակում են հաստանում և ճաքճքում: Այդ հավի քոսն է: Պետք է քոսի դեղ քսել, իսկ յեթե հիվանդությունը նոր է առաջացել, նավթն էլ է ոգնում:

Վերև հիշված հիվանդությունների դեմ գյուղացին ինքն էլ կարող է միջոցներ ձեռք առնել: Մնացած դեպքերում, յերբ ուրիշ հիվանդություններ են յերևում, գյուղացին պետք է անասնաբուժակին իմաց տա: Բուժակը կրտսնի, կիմանա, թե ինչ հիվանդություն է, դեղ կըտա, յեթե կարիք լինի փորն էլ կձղի և հավին կազատի:

Այս բոլոր հիվանդություններն այնքան վնաս չեն տալիս, ինչքան մնացած վարակիչ հիվանդությունները: Վարակիչ հիվանդության դեպքում պետք է միջոցներ ձեռք առնել, վոր մնացած հավերը չհիվանդանան:

Հենց վոր հավերի մեջ փորահարինք յերևաց, հավերը փշաքաղվեցին, կուչ յեկան, բերանի մեջ ուռուցքներ յերևացին, կամ աչքի կոպերն սկսեցին ուռչել, ուրեմն իմացիք, վոր այդ վարակիչ հիվանդությունն է:

Իսկույն պետք է առողջ հավերին առանձնացնել հիվանդներից, ուրիշ տեղ պահել, աշխատել, վոր հիվանդների հետ միասին չլինեն: Կերի և ջրի ամանները պետք է տաք ջրով լվալ, հավաբնի պատերին կրաջուր քսել, հատակի դարմանը, ծերտը մի տեղ կիտել ու վառել: Հարկավոր է առանց ուշացնելու անասնաբուժին իմաց տալ:

Վարակիչ հիվանդություններ շատ կան (հավի խուլերա, ժանտախտ և այլն): Յեթե միջոցներ ձեռք չառնես, ամբողջ հավերը մի քանի որում կըսատկեն:

Ամենից առաջ պետք է միջոցներ ձեռք առնել, վոր վարակիչ հիվանդությունը չերևա հավերի մեջ: Այդ հիվանդություններն ամենից առաջ տարածվում են կեղտոտ ջրի միջոցով:

Յեթե հավերը սատկոտում են, սատկածներին պետք է հողի մեջ խոր թաղել կամ վառել: Թե չէ սատկած հավի միսը խողը կարող է ուտել և սատկել, շունը կարող է կրծել և կտորներն էլ ջաշ տալ դես—դեն, բակը բերել և ուրեմն վարակել մյուսներին, կամ թե ագռավներն են կտցահարում, հետո ուրիշի բակ թռչում կամ հենց նույն բակում հիվանդությունն էլ ավելի տարածում: Հիվանդ հավերի ծերտը ևս պետք է վառել, վոչնչացնել:

Հիվանդությունը շուտ կըվերանա, յեթե առանց ուշանալու միջոցներ ձեռք առնես հիվանդության դեմ: Կըծուկանա սատկած հավը հողով ծածկելու, վաղը մյուսներն էլ կըհիվանդանան: Այն ժամանակ միայն քեզ մեղադրիր:

ՇԱՏ ՈԳՈՒՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՆՁՊԵՍ ՊԻՏԻ ԾԱԽԵԼ ՀԱՎՆ ՈՒ ԶՈՒՆ

Քաղաքներում հաճախ ու ձուռն միշտ ել լավ գնով են ծախվում: Նկատված է, վոր հարուստ յերկրներում շատ ավելի հավ ու ձուռն յե սպառվում, քան աղքատ յերկրներում: Յեվ ուրիշ տեղերից գեպի այդ հարուստ յերկրներ են ուղարկում միլիոններով հավ ու ձուռն:

Գյուղական տնտեսություններն են մեծ քանակությամբ հավ ու ձուռն ծախում: Յեվ ինչքան լավ լինի ապրանքը, այնքան ել լավ գնով կծախվի:

Այն ինչ հարցերը գյուղացուն, նա կասի թե իր հավերից մի կուպեկ ել ոգուտ չի ստանում: Յեվ այդ ճիշտ է, գյուղացին սխալ չի ասում:

Նախ նրա հավերը փոքր են, շատ-շատ 2—3 ֆունտ, լավ չի կերակրում, միսը կոշտ է, անհամ, ձվերն ել փոքր են, կեղտոտ, ծախելիս շատերը փչացած են լինում: Դրա համար ել լավ գին չեն տալիս:

Մեր գրքի սկզբում մենք ասացին, վոր Ռուսաստանը տասնյակ միլիոնների հավ ու ձուռն յե ծախում ոտար յերկրներում: Անգլիայում Ռուսաստանից տարած ձվերն աժան են ծախվում, լավ գին չեն տալիս, վորովհետեւ լավը չեն:

Այդ մի պատճառը: Յերկրորդ պատճառն ել այն է, վոր գյուղացիք չեն իմանում հավ ու ձուռն ծախելու ձևերը: Չվերլավ պետք է փոխադրել, վոր ճանապարհին չփրչանա, պետք է մաքուր պահել, պետք է առաջուց իմանալ, թե շուկայում ինչ գներ կան: Գլխավորն այն է, վոր գյուղացին ձուռն անմիջապես չի ծախում նրան, ով ձվի կարիք ունի:

Սովորաբար գյուղացին հաճախ ու ձուռն ծախում է հատուկ մարդկանց, վորոնք շատ աժան են առնում և մի քիչ թանգացնելով ծախում ուրիշին: սրանք ել իրենց հերթին են թանգացնում և հետո ծախում քաղաքում: Ու-

րեմն գյուղացու հաճախ ու ձուռն, մի քանի ձեռքից է անցնում, մինչև տեղ հասնելը: Ել ինչո՞ւ զարմանալ, վոր գյուղացին քիչ ոգուտ է ստանում հավ պահելուց:

Գյուղացիք իրենք պետք է աշխատեն ծախել, առանց միջնորդի: Մենք չենք ուզում ասել, թե ամեն մի գյուղացի զամբյուղը պետք է թեին գցի և քաղաքում մի որ ման գա, մի հարյուր ձուռն ծախելու համար: Այսպես ինչքան ել նա լավ գնով ծախի, ոգուտը քիչ կլինի:

Պետք է գյուղացիք միանան և կազմեն արտելներ:

Արտելի մշտցով և լավ կծախեն իրենց հաճախ ու ձուռն, և վարկ ստանալով՝ կարող են ավելի շատ հավ պահել, ցեղական հավեր բերել, ինկուբատոր պատրաստել և այլն: Միայն արտելն է, վորի միջոցով կարելի յե թռչնապահությունից ոգուտ ստանալ:

Հայաստանում հիմա շատ արտելներ կան: Արտելները զանազան տեսակի յեն՝ կաթնատնտեսական, շերամապահական, մեղվապահական և այլն: Պետք է հիմնել և թռչնապահների արտել և արտելի միջոցով գյուղում զարգացնել թռչնապահությունը:

Ոգուտ ստանալու համար նախ լավ հավ պետք է պահել և ապա այդ հաճախ ու ձուռն լավ գնով ծախել: Յերկուսն ել կարելի յե անել արտելի միջոցով: Արտելը կըկազմակերպի հավի և ձվի վաճառքը, արտելը կարող է վարկ ստանալ, ցեղական հավեր գնել և այլն:

Մեզանում շատ գյուղեր կան, վորտեղ թռչնապահությունից կարելի յե լավ յեկամուտ ստանալ: Ամեն մի տուն ել հավ ունի, հարկավոր է մի քիչ ուշադրություն դարձնել, մի յերկու տարի աշխատանք թափել: Թռչնապահների արտելը գյուղատնտեսի և անասնաբուծի ոգնությամբ կարող է գործն այնպես գնել, վոր մի յերկու տարում մեր հասարակ հավից բավական ոգուտ ստացվի:

Շատերն են հին հեքյաթներում լսել վոսկե ձու ածող հավերի մասին: Մեր սովորական հավերի ձուռն ել կարելի յե վոսկի դարձնել, յեթե մենք ցեղը լավացնենք, սովորենք հավին լավ կերակրել ու խնամել և արտելներ կազմենք, թռչնապահության միջոցներով հաճախ ու ձուռն լավ գներով ծախելու համար:



1. Թուչնապահութիւնից գյուղացիին կարող ե լավ յեկամուտ ստանալ	3
2. Յեղը վոր լավ լինի, յեկամուտն ել շատ կլլինի .	7
3. Ի՞նչպիսի հավեր կան և վորո՞նք են լավ մեղ հա- մար	12
4. Ի՞նչպես պետք ե հավերը պահել	19
5. Հավերն ի՞նչով են ապրում	24
6. Հավերն ի՞նչով կերակրել	27
7. Ի՞նչքան կեր տալ հավերին և ի՞նչպես	29
8. Ի՞նչո՞ւ յե հավը ավագ քարի և նուֆնիսկ ապակու կտորներ կուլ տալիս	32
9. Ի՞նչպես կերակրել ճուտերին	33
10. Ի՞նչպես թուխս դնել	34
11. Ի՞նչպես են առանց թուխս դնելու ճուտեր ստա- նում	39
12. Ի՞նչ անել, վոր հավերը չը հիվանդանան	43
13. Շատ ոգուտ ստանալու համար ի՞նչպես պիտի ծախել հազն ու ձուն	46



ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՄՆԵՆ

1. Խ. Յերիցյան. — Կաթնատնտեսության գործնական ձեռ-
նարկ, մասն առաջին, (64 նկարով)
2. Հ. Փիրզումյան. — Դեմի հողերի մշակությունը
3. Ս. Բակունց. — Կարտոֆիլի մշակությունը

ՊԱՏՐԱՍՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՀԵՏՁՀԵՏԵ ԿՀԱՆՁՆՎԵՆ
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Հողի ոգտագործման ընկերական ձևերը
2. Մեղունների խնամքը
3. Հողի պարարտացումը
4. Ինչպես են ցանում բամբակը շաբաքցանով

ԴԻՄԵՆ՝ ՅԵՐԵՎԱՆ, 'Հողօգիտաս' Հրատարակչության, Պետերասի
կենտրոնական յեվ գալառական գրախանութ-
ներին, Գալաղրաժիցներին:



22.588

ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ.